

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 Ձր.

Վեցամսեայ 6 Ձր.

ԱՐՏԱՍՈՒՇՄԱՆ

Երկու քիւրակի ծրարով

Տարեկան . . . 14 Ձր.

Վեցամսեայ . . . 7 Ձր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօյար

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԵՆԻԿ

Մանուցման ողոր
20 սանթիմ



ՄԱՐԿԱԿԱՆ

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՒԵՐԹԻ ԵՒ ՇՍԲԱԹ

ՀԱՍՑԵ

Rédaction du journal

«Le Vounk»

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

«ВУНКЪ»

ВАРНА

Գրութեանը ետ չեն
տրոհիր

ԱԶԴ

Իրենց բաժնեգրները
ցարդ ամբողջովին չը վճարող մեր
կարգ մը բաժնետիրներէն կը
խնդրենք որ ներկայ տարեշրջա-
նի վերջին ամսոյն մէջ գտնուել-
նիս նկատի առնելով, փութան
զրկել մեզ իրենց պարտքերը:

ԶԱՐԹՆՈՒՄԸ ՍԿՍՍԾ

Մեր դէմ ծառացած ազգային
աղէտներուն հանդէպ, կուսակ-
ցամբութեամբ կամաւորապէս
կարգացող, տեսածը չը տեսնե-
լու և լսածը չը լսելու զարնող
արտասահմանի սիրող յեղափոխա-
կանները ու յեղափոխականներու
համակիրները թո՛ղ հաճին քիչ
մը իրենց աչքերը ու ականջնե-
րը բանալ լսելու համար այն
ճշմարտութիւնները զորս մենք
երկար տարիներէ ի վեր կը մատ-
նանջինք, բայց իրենք չէին
տեսներ, կը քարոզէինք ու չէին
լսեր, որովհետեւ մենք իրենց
փարսխին չէինք պատկաներ,
իրենց կամ իրենց համակրած
կուսակցութեանէն դուրս կը գտ-
նուէինք: Այսօր այդ ճշմարտու-
թիւնները նոյն իսկ իրենց մար-
դիկը, իրենց գործիչները և օւ-
կանները մատնանջել և քարո-
զել սկսած են: Այո՛, ճշմարտու-
թիւններ յայտնելու համար
երէկ մեզ հայհոյողները այսօր
իրենք միեւնոյն ճշմարտութիւն-
ները քարոզելու ու գրելու ելեր
են:

Որչափ որ ալ ուշ ըլլայ, մենք
կրկին ուրախ ենք որ վերջապէս
զարթնումը սկսած է կուսակցա-
մոլութեամբ կոբրացած ու բթա-
ցածներուն մէջ ալ:

Անցեալ տարի Հին-Հնչակեան-
ներու ականջին շատ վատ հնչած
էին մեր մէկ քանի յօդուածնե-
րը հնչակեան խումբի մը սահ-
մանէն ներս Մօսկուն զրկուած
ըլլալուն դէմ, որովհետեւ այդ
աղէտ առաջ բերել սահմանուած
էր ու բերաւ, և թէ այդ 14 հո-

գինոց խումբին համար անհա-
ւատալի սուտեր կ'ընեցնել կը
ընային հին-Հնչակեան թեր-
թերը իրենց միամիտ հետեւող-
ներուն: Այն ատեն մենք ցոյց
տուինք ուղղութեան սխալը ու
հակասութիւնը, սուտը և ծաղրե-
լի չափազանցութիւնը: Այսօր ա-
հա բուն իսկ երկրէն եկող խումբ
մը հին հնչակեան գործիչներու
կոչը՝ զոր մեր նախորդ թուով
հրատարակեցինք, կը հաստատէ
մեր անցեալ տարուան գիտնե-
րուն ճշմարտութիւնը:

Երկրէն եկող գործիչները ի
րենց այդ կոչով կը ծանրանան
մասնաւորապէս հնչակեան կու-
սակցութեան ուսումնական-գիտ-
նական կուսակցութեան հետ միա-
ցումին դէմ, զոր հին Հնչակը
ասկէ տարի մը առաջ պաշտօնա-
պէս յայտարարած էր և զոր մենք
քննադատած էինք իբր հակազ-
գային քայլ: Տեսէք, ինչ կ'ըսեն
երկրէն եկող գործիչները:

Տաճկահայ եղբայրներ, մեր չափ-
կը աւելի մօտ է մարմինն, ուստի մենք
կը պահանջենք որ հնչակեան կուսակ-
ցութիւնը անպատճառ հաւատարիմ
մնայ թուրքիոյ ժողովրդային դատի
պաշտպանութեան անհրաժեշտութեան
մասին եւ գործէ այդ ուղղու-
թեամբ, կամ հակառակ դէպքում
մենք պիտի յարենք այն յեղափոխա-
կան կուսակցութեան, որն իսկապէս
կ'ընդդէմ Թաճկահայերիս դատով:

Եթէ հնչակեան վերջին պա-
ռակտումէն առաջ ալ հիններու
մէկ կարեւոր մասը այս ձայնը
բարձրացնէր, չարիքին առ-
ջեւ առնուած կ'ըլլար և Սաղու-
նի—Արզումանեանց մարդուկնե-
րը սօսիալիստութիւնը պահպա-
նելու նպատակաւ միութիւնը
քանդել չէին համարձակեր:

Ուրիշ խումբ մը՝ որուն «միակ
գործող և հզօր կուսակցութիւն»
անունը կուտային իր կարգ մը
արբանեակները, իր բոլոր գոր-
ծունէութեանց մէջ ցոյց տուաւ
լրջութեան, շրջահայեցութեան
և ուժի պակասը. իր տասնամեայ
գոյութեան ի վեր լուրջ ձեռ-

նարկ մը չունեցաւ որ աղգէն տո-
ւած զոհերուն ու փեսաներուն
մէկ տասներորդին շափ օգուտ
առաջ բերէր: Միշտ աղէտ ըս-
տեղծելու սահմանուած սխալ գոր-
ծունէութիւն մը, դէպի ինք-
նախաբուծիւն ձգտում մը և, հա-
կառակ իր «գաշնակցական» ա-
նունին տարբեր հայ ուժերու ու
կուսակցութիւններու հանդէպ
թշնամական ընթացք մը. ահա
այն գլխաւոր առաւելութիւննե-
րը զորս կը ներկայացնէ այդ
խումբը զոր մենք խիստ բազմա-
թիւ պարագաներու տակ չենք
թերացած իրաւամբ քննադատե-
լէ և այս պատճառաւ անիրաւ
հարուածներ կրելէ այդ խումբ
ի կարգ մը մարդերէն, որոնք
այսօր բարեբաղդաբար սկսած
են այլեւս մեր աւելի առաջ ը-
սածները կրկնել և ըսել:

Ժամանակը հեռանալէ ցոյց տուաւ
որ հայ ազգը դեռ չէ գտած հաստատ
ու ամուր կուստն մը որուն վրայ ի-
րաւամբ կարենայ հիսել իր փրկու-
թեան չէնք: Պարագաները յստակ-
օրէն ապացուցին որ մեր յեղափոխա-
կան կազմակերպութիւնները իրենց
մոյլ ու ճիւղով շատ հեռու են այդ կը-
ուսունը ըլլալէ:

Մենք հոս անոնց չափի ը-
սենք ու կշտամբենք թէ ժամա-
նակը կամ պարագաները այդ
ճշմարտութիւնը նոր ցոյց չը
տուին: այդ թուութիւնները,
այն ապիկարութիւնները, այն
սխալները ու կեղծիքները քա-
նի՛ տարիներէ ի վեր էկային
ձեր կուսակցութեան մէջ, բայց
կուսակցամոլութիւնը և անձնա-
կան հաշիւները ձեզ կուրացու-
ցած ու խլացուցած էին չը լը-
սելու, չը տեսնելու և չը խոս-
տովանելու համար ճշմարտու-
թիւնը: Սակայն այսօր ուրախ ենք
որ զարթնումը սկսած է ձեր
մէջ ալ. և աւելի ուրախ ենք
որ գաշնակցականներու աւելի
գիտակից և խելահաս մասին մէջ
այդ ոկսած է:

Հին Հնչակեաններու և Դաշ-
նակցականներու գիտակից մա-
սերը այսպէս անգամ մը հիաս-

թափումի շուարումէն ազատուել-
նուն պէս, եթէ իրոք հայ ազ-
գի ազատութեան կուսանը կու-
զեն ամուր և հաստատ տեսնել,
պէտք է առանց վարանելու ուժ
տան այն կազմակերպութեան որ
«իսկապէս կը զբաղի Տաճկահա-
յաստանի դատով և որ իրեն ըս-
կըրունք ընտրած է շրջահայեաց
ու լուրջ գործունէութիւն մի
միայն ունենայ, և յումպետ չը
վատնել ազգին նիւթական ու ֆի-
զիզական ուժերը:

Եթէ այս հիմերուն վրայ դո-
յութիւն ունեցող հայ յեղափո-
կազմակերպութիւնն ալ իրենց
համար քննադատելի ու անվս-
տահելի կողմեր ունի, կարող են
ներս մտնել և ուղղել ջանալ. բա-
ւական է որ ասոր մէջ կարծիքի
ազոտութիւնը կը յարգուի և ըն-
տանեկան ժողովներով կամ ըս-
պառնալիքներով չեն վճռուի
խնդիրները:

—Քանի որ արթնցաք, մի՛ տա-
տամիք, մտէք ու զօրացուցէք.
եթէ հարկ է, մաքրեցէք ալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՂՈՔՆԵՐ

ԲԱՐԻՉԻ ՄԻԹԻՆԿԸ

Նոյեմբեր 30 ին տեղի ունե-
ցած գումարումի մասին «Օրօր»
հետեւեալ մանրամասնութիւննե-
րը կուտայ:

Կովկաս եւ Փոքր-Ասիա Հայոց ու-
նեցած վիճակին համար, Բո Արմենիայի
կազմակերպած բանախօսանքը—
«Բանախօսանք»-ը Գիտական Ընկերութեանց
սրահին մէջ, մեծաշուք ցոյց մը եղաւ,
թէ՛ հանդիսականներուն արտակարգ
խուռն բողբոլութեամբ, թէ՛ արտասա-
նուած ձառերուն կարեւորութեամբ:
Բանախօսանքին սկզբնաւորութեա-
նը, Բամիլ Բիլիան, (*) քանի մը խօս-
քով, Ժօրէսին բացակայութիւնը ար-
դարացուց, հիւանդութեան պատճառա-
բանութեամբ:

Ետքէն Պ. ար Բոնիսան, իր խորին
հմտութեամբ, Հայկական խնդիրը պար-
զեց: Այնպատաւէր ամբողջ ժողովրդի

(*) Նախկին ծովային նախարար

մը մշտապէս կոտորածներուն հանդէպ
Եւրոպայի լուսթիւնը՝ մեղադարտ յայ-
տարարեց . այդ լուսթիւնը շատ աւելի
մեղադարտ է նամանակահատիկ պատ-
ճառաւ որ Պերլինի դաշնագրին 61-րդ
յօդուածը իր վրայ պարտականութիւն
դրած է իրաց այս վիճակին վախճան
մը տալ :

Յետոյ կարգացուցաւ այն նամա-
կը , յորում պերճախօսօրէն ցուցա-
դրուած էին այն բոլոր տառապանքնե-
րը եւ կամայականութիւնը զոր Համի-
տական բռնապետութիւնը Հայոց վը-
րայ կը ծանրացնէ : Պ. Քիյար իր նա-
մակը կը վերջացնէ ըսելով . «Մօտա-
ւոր օր մը, Եւրոպան թերեւս իր դա-
կններուն արեւնովը պիտի փոխարի-
նէ Մեծ-Մարդապանին նկատմամբ
իր եղբունասէր հաճոյակաւարութիւն
ները : »

Պ. Վիկթոր Պէրար, նշանաւոր հրմ-
տութեամբ մը, Հայոց պատմական դե-
րին վրայ խօսեցաւ , քաղաքակրթիչ
գեր, շնորհիւ հայոց զարգացմանը ու
առեւտրական յարաբերութեանցը զոր
ժողովուրդներուն միջեւ հաստատեցին :
Հայոց նկարագրին վրայ տարածու-
ած զրպարտանքները հերքեց, ու պըն-
դեց , թէ Մայրագոյն Արեւելքին խըն-
դիրը մեծ մասամբ կրնայ լուծուիլ
Հայաստանով, շնորհիւ անոր աշխար-
հագրական դիրքին :

Քաղաքացին Քամիլ Բեկթան, ճա-
ռերուն շարքը վերջացուց հոգեցուց
կող մը ուղեբձելով Ֆրանսական կո-
րովներուն, լուծելու համար այս խըն-
դիրը, Ֆրանսայի համար ա՛յնքան վըշ-
տաբեր եւ ա՛յնքան ստորնացուցիչ :

Քուէարկման շառափարկուած օրա-
կարգը կը շնորհաւորէ ողաւ ժողովուր-
դը, որ իր իրաւունքներուն եւ ազա-
տութիւններուն չյեղափոխական յաղ-
թանակաւ տիրացած ատեն, Հայ, Բո-
լոնիացի եւ Ֆրանսացի ազգերը, Ռուս-
սին սեփական դատէն անջատած չէ » .
Կոտորածներուն համար իր նողկան-
քը կը յայտնէ, կը պնդէ «որ Եւրո-
պան թէ՛ ինքզինքն» պարտական է ,
թէ՛ օսմանեան կայսրութեան ճնշուած
Ազգայնութեանց, նաւային ցոյցը չը
սահմանափակել Մակեդոնիոյ համար
արդար բայց անբաւական բարենորո-

գումներու պահանջմանց միայն , այլ,
եթէ հարկ է, ուժը իրաւունքին սպա-
սակել, ա՛յնքան զործադրելու հա-
մար Հայաստանի եւ Մակեդոնիոյ ի
նպաստ դաշնագրերը , ու ամբողջա-
պէս եւ վերջապէս ազատել ամբողջ
Թիւրքիան, մէջը ըլլալով Թիւրք ժո-
ղովուրդը եւս : »

Այս օրակարգը գոհունակութեան եր-
կարածեւ աղաղակներով ըրեցարկու-
եցաւ . ու այս գումարումը որ կը
վերջանայ , Հայկական դատի հա-
մար պիտի կրնայ մեծ օգտակարութիւն
ունենալ :

Կ Ո Ջ Ա Ռ Ե Ի Ր Ո Պ Ա

Դրօշակին խմբագրութիւնը ժընէվէն
նոյեմբեր 29-ի թուակիր հետեւեալ հե-
ռագիրը զարկած է Եւրոպայի մամու-
լին :

«Հայ Յեղափոխական Դաշնակցու-
թիւնը իր պարտականութիւնը կը հա-
մարի մեծ պետութիւններու գիւնա-
գրութեան յիշեցնել, թէ Մակեդո-
նիոյ մէջ ելեւմտական վերահսկման հա-
մար նաւային հաւաքական ցոյցը գին-
քը որքան ուրախութեամբ կը լեցնէ,
այնքան ալ իրաւացի վրդովում կ'ազ-
դէ, հանդէպ սպառնալիքներուն օսման-
եան կառավարութեան որ կը տրա-
մադրուի եղբւր իր պարտութեան վը-
րէժը լուծել, Հայաստան ըրիտօնէից
նորանոր ջարդեր կազմակերպելով ,
Կոտորածները արդէն սկսած են էր-
զումով եւ Պիլիքի նահանգներուն մէջ ,
Դաշնակցութիւնը ծայրայեղ կորովով
կը ըողոքէ՝ ընդդէմ՝ Պերլինի դաշնա-
գիրը ստորագրող գիւնագրութեան
տարօրինակ անտարբերութեանը Հայ
ժողովրդին համար, որուն դատը Մա-
կեդոնականէն անբաժան է , եւ զոր
գիւնագրութիւնը կը շարունակէ էն
վայրենի մոլեգնութեանց ձեռքը թո-
ղուլ :
(Լուսաբեր)

ՆՈՐ ԴԵՊԲԵՐ ՌՈՒՍԻՈՅ ՄԷՋ

Ձէմթիվներու ներկայացուցիչները
Բեդերսպուրկէն Մօսկուա վերադառ-

ներով , խոսվարարական նպատակը
յառաջացնելու համար ծախսուած
դրամին մէկ մասին ստացման վերա-
բերեալ դրամատան արձանագրու-
թեանց օրինակներով, եւ խոսվարար-
ներու ձեռք ձգած եւ Ժօրիսի քով
ի պահ գտնուած 140 քիւ մէլէնի-
թէն եղեռնական պայթիւնի միջո-
ցին սպառած քանակութիւնէն աւել-
նալով դռնապան Առաքելի միջոցաւ
աւտորիական հիւանդանոցին մէջ
պահուած եւ մէկ մասին ալ դռնա-
պան Մանուկի միջոցաւ հորին մէջ
նետուելով ոչնչացած ըլլալովը, եւ
միւս ու մերուն , երկուքը գործիքնե-
րուն, քանդիչ հրանքներուն յիշ-
եալ հիւանդանոցին եւ ձօնաւ արար-
թմանին եւ Քրէօքէր պանդոկին
եւ մեծ քիւլային նման օտար հաստա-
տութիւններու մէջ գտնուելով մէջ-
տեղ հանուելովը , դէպքին եւ ոճրին
ընթացքին վերաբերեալ ապացոյցնե-
րով , կառքին բեկորներուն քննու-
թեան եւ բաղդատութեան (արդիւն-
քով , պայթման վերաբերեալ գիտա-
կան տեղեկագիրներով կառքը պատ-
րաստելու եւ բերելու վերաբերեալ
Վիէնայի Օսմանեան զինպանաւ
եւ Մաքսային Վերաբերութեան
պաշտօնական տեղեկագրութիւննե-

նալով յայտարարած են թէ ի զուր
սպասած են երկար ատեն գոհիւրէի ո-
րոշումներու պատասխանին, Վիթթէն
իր գործերովը ժխտապէս պատասխա-
նեց :

Դեկտ. 2-ին գոհիւրէսի պիւրօն ար-
տակարգ ժողով մը ունեցաւ եւ խոր-
հրդակցեցաւ թէ նորէն հարկ է գծն-
կընէ գումարել, եւ դատեց թէ այլ
եւս անցած է պոնկիւններու շրջանը եւ
հասած է ժամանակը գործունէութեան
նոր ուղղութիւն մը տալու :

—Խօստով (Տօն գետի վրայ) մօծ խոս-
վութիւններ տեղի ունեցած են .
զօրքը կրակ ըրած է ժողովուրդին
վրայ, չուրջ 300 սպանուած եւ ծանր
վիրաւորուած : Նաւահանգիստի գոր-
ծաւորները այրած են նաւակները
որոնք ապրանքով բեռնաւորուած
էին : Վտճառականները մեծ վնասնե-
րու ենթարկուած են , Բնակչութիւ-
նը մեծ խուճեղով կը գաղթէ . բո-
լոր խանութները փակ են : Հրէից
թաղին մէջ շարունակ հրդեհ կը ծա-
գի :

Բարիդ 3 դեկտ. — Էթըռնէնէն կը
հաղորդեն թէ Ռիկա քաղաքի յարա-
բերութիւնները ամբողջ Ռուսիոյ հետ
կտրուած են : Բոլոր գործաւորները եւ
կառապանները գործադուլ ըրած են :
Ռիկայէ եկողներ կը յայտարարեն
թէ այդ յեղափոխութիւնը առաջ ե-
կած է զինուորական վիճակ հրատա-
րակուելէն : Ձինուորներու եւ յեղա-
փոխականներու միջեւ ընդհարում տե-
ղի ունեցած է . կառավարական ըս-
տացուածները աւարի արուած են :
Կայսրանը եւ հեռագրատունը զը-
րաւուած են՝ գործաւորներէն : Լիպսէն
Ռիկա պատերազմ՝ նաւեր զրկուած են :

Ձինուորները Մօսկուայի եւ Օրէլի
մէջ միթիւնկ գումարելով , խոստա-
ցած են որ իրենց նշան տրուելուն
պէս անցնին ընկերվարականներու
կողմը կոտելու համար կառավարու-
թեան դէմ : Քիէվի մէջ զինուորները
կը մասնակցին յեղափ. ցոյցերուն ,
եւ ուսանողներու օր գործաւորներու
հետ եղբարկացած անոնց ներդու-

րով, յիշեալ վնասակար անձերէն Լի-
բոքսին եւ ընկերներուն Իզմիրի
մէջ ալ խել մը գործակիցներ ճա-
րելով այնտեղ ալ յեղափոխական
ձեռնարկներ ընելու պահուն՝ անոնց
ալ իրենց բոլոր գործիքներով եւ
վնասակար նիւթերով ձեռք անցուե-
լովը, անոնց նկատմամբ ալ առան-
ձին քննութիւն եւ դատական գոր-
ծողութիւն տեղի ունենալու պարա-
գալով, նոյն վնասակար անձերու
ընկերներուն Պիլէնի մէջ խոսվա-
րարական մասնաճիւղ մը կազմելով
որ Պոլսի եւ Իզմիր կարգ մը ձեռ-
նարկներ եւ յղումներ ըրած պահուն
անոնց վնասակար թուղթերը եւ հիւ-
թերը Հելլէնական կառավարութեան
միջոցաւ ձեռք տնցուելով անոնց
մասին քննութիւն եւ դատավարու-
թիւն տեղի ունենալու մասին հասած
պաշտօնական լրտութեամբ :

Հետեւաբար՝ Լիբառիքս՝ ուրիշ ան-
ուամբ Սաֆօի, Տիկին Սօֆի Բիւսի,
Տիկին Ժօրիս Աննա Նէլէնսի, Օր.
Ռուպինա Ֆայիսի, Տիկին Ալքօլա ,
կառապան Գրիգոր Վորչում , Յով-
հաննէսի որդի Կարապետ Սլոտի, Ար-
տաշ Խաչիկ Գարապետեան, Թորգոմի
Սիւր Սէպօրի՝ իրակէն՝ անուամբ
Վահանի, կառապան Մկրտիչ Ղարիպ-

թիւնը խնդրած են առկէ առաջ անոնց
դէմ կրակ ըրած ըլլալուն համար .
Յեղափոխականները պալթիկեան
չրջանակներուն մէջ կազմած են
գաղտնի կառավարութիւններ որոնք
մեծ մտահոգութիւն կը պատճառեն
կառավարութեան :

ԺՕՐԻՍԻՆ ՄԱՅՐԸ

Պրուքսէլէ կը հաղորդեն Նաւե
Ֆուսէ Բեւէսի :

Պելճիոյ Մարդկային Իրաւանց
Միութիւնը Ֆրանսայի դիւանա-
գիտութեան աշակցութիւնը ա-
պահոված է ֆրանսական Մարդ-
կային Իրաւանց Միութեան մի-
ջոցով , ազատելու համար Ժօրի-
սը Թուրքիոյ մէջ դատապար-
տուելէ, եւ նշանակութիւն տա-
լու Պելճիոյ, Իտալիոյ, Զուիցե-
րիոյ, Ֆրանսայի եւ Միացեալ Նա-
հանգներու գաղտնիչաւորներ
ունեն : Ժօրիսի մայրը խնդրագը-
րեր ուղղած է Թագաւորին, նա-
խարարին եւ երեսփոխաններուն
արգելելու համար իր գաւակին
վրայ մահուան պատժոյ գործա-
դրութիւնը :

Այս օրեր Ալթիլէրէնի մէջ ե-
րեսփոխաններու հաւաքում մը
տեղի ունեցած է ուժ տալու
Պելճիոյ կառավարութեան պա-
հանջին եւ փութացնելու Ժօրիսի
ազատումը :

ԲԵԴԵՐՍՊՈՒՐԿԷՆ

Ն Ա Մ Ա Կ

Բեդերսպուրկէն Ժուռնալի Թըդ-
մակիցը հետեւեալ տեղեկութիւննե-
րը հաղորդած է .

Եանի ձիադարման Երուանդ Ֆրան-
կելեանի, Էտուար Ժօրիսի, դռնապան
Յովհաննէսի , խահուէճի Նշանի,
դռնապան Մանուկի, դռնապան Առա-
քելի, Յովսէփի, քիւլայի պաշտօնեանե-
րէն Մանուկի եւ Ախլաթի Ֆրօի
ընթացք կը պատշաճի պատժական
օրինաց 58րդ յօդուածին եւ 58րդ յօդ-
ուածի յանդիմանին Ա. հատուածին,
իսկ կօչկակար Արշակի, դպրոցական
Յովակիմ եւ Գարեգինի, Երուանդ
Արաճեանի, Ամուճա Արաճեանի,
Թագուր Յակոբեանի, գրածախ Սիլայի,
Երուանդ Յովսէփեանի, Պօղոսի եւ
միւս Մանուկի եւ Խաչիկի ընթացքն
ալ կը պատշաճի վերստին 58րդ
յօդուածի առաջին հատուածին, Մա-
թէօյի, Միխայիլի, Միլիթի եւ Ման-
լի ընթացքն ալ կը պատշաճի նոյն
օրինաց 63րդ յօդուածին, իսկ յետ
քննութեան մեռած ըլլալը պաշտօ-
նապէս ստուգուած դպրոցական Մա-
նուկի եւ քննութեան միջոցին անձ-
նասպան եղող խահուէճի Նշանի նը-
կատմամբ որոշուած է դադարեցնել
հանրային իրաւանց դատը :

Պահանջագիրն ալ որոշման գրին պա-
րունակութեան համեմատ, ամբաս-
տանիցը ըստ այնմ ոճիւրով ամբաս-
տանուելը կը պահանջէ՝ աւելցնելով

ՍՈՒԼԹԱՆԸ ՄՊԱՆՆԵԼՈՒ
ՓՈՐՁԻՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

[Շար. Կարող թիւէն]

Վերջապէս՝ քննութեանց տեղեկա-
գրին մէջ մանրամասնուած եւ կազ-
մակերպութեան նպատակը Պոլսոյ
եւ Թուրքիոյ զանազան կարեւոր
վայրերուն մէջ ամէն կարգի հպա-
տակներու եւ ուրիշ օտար հպատակ-
ներու դէմ ցաւալի խառնակութիւն
մը յարուցանելու եւ տուներ ու
չէնքեր քանդելով մեծամեծ վնասուց
պատճառ ըլլալու վայրենական գա-
ղափարով տոգորեալ եւ Պոլսոյ մէջ
կազմուած խոսվարարական մասնա-
ճիւղին վնասակար անգամոց իւրա-
քանչիւրին ուրոյն ուրոյն կատարած
եպերիւի եւ եղեռնական դերը այս
է : Ասոնց մեղսակցութիւնը հաստա-
տուած է, հարցաքննութեանց թուղ-
թերուն մէջ գտնուած իւրաքանչիւ-
րին յայտարարութեամբ եւ խոստո-
վանութեամբ , վճռական ու վաւերա-
կան ապացոյցներով, պաշտօնական
գրութեամբ , լսուած խել մը վկա-

Ամէն կողմէ կը լսուի գինուորական ըմբոստացումներ: Կը հաւատան թէ Մանչուրիոյ բանակին մէկ մասը Ռուսիա կը վերադառնա: Երբ զորքը զօրացնելու համար, որովհետեւ վախ կայ թէ վերահաս խռովութիւններու առնիք զօրքը ըմբոստանայ: Ուստի հարցուցի բարձր պաշտօնեայի մը թէ այս բոլոր անցած դարձածներու մասին ի՞նչ կը խորհի եւ ի՞նչ կարծիք ունի: Ըստ անոր վկայութեան, ծանր դէպքերուն վերջը ապստամբութիւն մը պիտի ըլլայ ինչպէս որ եղբրէ Գիւլի Է: Լաւ վերայ զօրաց գունդերուն մէջ:

Ահա այդ դէպքը պաշտօնական պատմութիւնը:

«Դեկտ. 8-ի (ն. 5) առաւօտուն ռահ-վիրայ զօրաց խումբ մը դժգոհ ըլլալով իր հրամանատարէն ըմբոստացաւ եւ համոզեց երկրորդ խումբ մըն ալ իրեն կցուելու: Յետոյ ոպառնալիքով կամ համոզելով զօրագունդին մնացած մասն ալ իրենց համաձայնեցուցին:

«Վերջը գինուորով բերդէն դուրս ելան հազարի չափ գինուորներ եւ ուղղուեցան Գուրսքի 125 թիւ զօրաբաժնի զօրանոցը, սակայն այս զօրաբաժինը հաւատարիմ մնաց:

«Հրեայ նուագածուններ ապստամբութեան առջեւ կերթային: Այս վերջինները կը քանային ուրիշ շատ մը զօրաբաժիններ համոզել որ ապստամբին, բայց չէին յաջողեր:

«Վերջապէս, ապստամբները քաղցին թնդանթաձիգ զօրաց 33րդ զօրաբաժնի եւ Ազովի հետեակ զօրաց գունդի զօրանոցը: Այս վերջինը անարգական պատասխաններ տուաւ ըմբոստներուն: Այն ատին ասոնք կրակ ըրին եւ Ազովի զօրագունդը միանուագ հրաձգութեամբ (սալվ) պատասխանեց:

Ռահվիրաներու մէկ մասը փախաւ Միւսկերը շարունակելին հրացանաձգութիւնը Ազովի գունդին հետ:

«Ինչ ժամանակ յետոյ, ապստամբները զէնքերին վար դնելով փախան, անոնցմէ գրեթէ 200 հոգի յանձնուեցան: Ամէն բան վերջացած

էր երկու քուկէս ժամէն: Ըմբոստները յիսուն մեռեալ եւ հարիւր վիրաւորներ գետնի վրայ թողած էին:

«Զինուորական իշխանութիւնք յայտարարեցին թէ ասկէ յետոյ ըմբոստացման ամէն ձգտում թնդանթաձիգութեամբ պիտի դադարի:»

Ահա Այսպէս կըլլայ առանց չըջանալեցութեան կատարուած ապստամբութեանց հետեւանքը:

Վօռոնէժի մէջ ալ ոչ նուազ ծանր դէպքեր պատահած են:

Երկէ ալոյցաւ գինուորական բանտար բանտարկեալներու եւ ըմբոստ գինուորներու կողմէ: Կրակը ճարակեց նաեւ կարգ մը վաճառանոցներ: Ըմբոստները թափօր կազմած եւ սուլելէն նուագախումբը ձգած գացին ազատելու քաղաքական բանտին բանտարկեալները, բայց արգելուեցան կանոնաւոր զօրքէն այն կամուրջին առջեւ որ քաղաքէն բանտ երթալու ճամբուն վրայ է: Զրհանկիրներուն վրայ կրակ ըրին բանտարկեալները որ հերդեհը չը մարին: Բանտը չըջապատուեցաւ զօրքով: Ըմբոստ զօրքերու մէկ մասը ձերբակալուեցաւ: Փոխադարձ հրացանաձգութիւն մը յետոյ մէկ մասը փախաւ եւ միւսը գինուորներէն պաշարուեցաւ: Բաւական զոհեր կան:

Բեթերսպուրկի մէջ ով որ կրնայ քաղաքէն հեռանալ կը փութայ մեկնելու, որովհետեւ երկաթուղիի գործադուլը վերահաս է: Ելեւստական ու վաճառականական բոլոր գործադուլները անգամաւոր ծուլած են:

Գործաւորներու մեծ խումբ մը անգործ մնացած հաւաքուած է Բէթերսպուրկի կառավարին պաշտօնատան առջեւ եւ երկաթուղիի ձրի տոմսակ կը պահանջէ իրենց ծննդավայրերը վերադառնալու համար: Ոստիկանութիւնը զանոնք քցուեց:

Զրոյց ելաւ թէ Սօսկուայի Խնայողական Միութեան ձգուած բոլոր գրաւները ետ առնուած են: ասոր վերայ Բեթերսպուրկի Ժողովուրդն ալ իր գրաւները ետ պահանջեց:

Փողոցները խաղաղ երեւոյթ մը ունին, հետեակ եւ հեծեալ բազմաթիւ զինուորներ կը հսկեն:

ԱԶԳԱՅԻՆ

Պատրիարքարանը ասկէ առաջ չըջաւերականով մը պարտաւորած էր բոլոր թաղ խորհուրդները ու առաջնորդարանները որ իրենց մատակարարութեան տակ գտնուող եկեղեցական կալուածները կամ շէնքերը ապահովագրել տան: Երբեմն գաւառներէ պատասխանուած է թէ, թէեւ ազգ. մարմինները տրամադիր են ապահովագրել տալու, սակայն այդ տեղերու մէջ ապահովագրական ընկերութեան գործակալներ չկան, կամ եթէ կան ալ, չեն ուզեր թուրքիոյ ներսի գաւառները հայու շէնքեր ապահովագրել: Քանի որ հայուն ապահովագրելու միջոց չկայ, ապա ինչո՞ւ չափշտակուելու կամ հրդեհուելու վտանգէն զերծ չէ:

—Պոլսոյ Խաղաղութեան Եկեղեցիին մէջ ամիրաներէ մնացած քանի մը ծանրագին գորգերը անյայտ եղեր են: Թաղ. Խորհուրդը հազիւ վերջերս նշմարել է այդ գորգերուն անյայտացած ըլլալը: Բայց հաւանականաբար ժամկոչը եւ քահանաները ժամանակին տեղեակ պիտի ըլլան այդ գործութեան, որուն մէջ անկարելի է որ իրենց մատը եղած չըլլայ:

—Գահիրէի Գաղ. Ժողովը Յանձնախումբ մը կազմել է կովկասահայ արկածելոց ի նպաստ հանգանակութիւն կատարելու համար: Աւելի առաջ նոյն քաղաքի Լոռաքեր թերթը նոյն նշանակաւ հանգանակութիւն մը պատկաւ հանգանակութիւն մը

բացած ըլլալով, գոյացած 40 անգլ. ոսկին արդէն չըկեր է Տիգրիս նպաստից Յանձնաժողովի Գանձապահ Տ. Ալէքսանդր Մե. լիք-Ալարեանին:

Ն Ո Ր Թ Ե Ր Թ Ե Ր

Ամերիկայի Պօստըն քաղաքին մէջ վերջերս հրատարակուիլ սկսած է Արախ շարաթաթերթ մը: Խմբագրապետութեամբ Վ. Շահէնի: Այս թերթը հայ յեղափոխութեան համակիր ըլլալու երեւոյթն ունի, բայց չը պատկանիր զոյուեթիւն ունեցող յայտնի կուսակցութիւններու, եւ հակառակորդ կը հանդիսանայ մասնաւորապէս Վեր. Հրեշտակեան կուսակցութեան: Հաւաստողներ կան թէ Արախ Ամերիկայի սրբազան Սոաքնորդին օսկանն է: Արախ ի տարեկան բաժնեգրին է 12 ֆր. վեցամսեայ 6 ֆր. եւ հասցէն է Խմբ. Արախ Թերթի, բօթի Էտուփ 1737, ՊՕՄԴՈՆ:

Ամերիկեան նոյն քաղաքին մէջ քանի մը ճամբան է Վեր. հրատարակող ԱՐԾԻԻ կիսամսեան, առանց իր քաղաքական որոշ գոյնը յայտնելու, սկսած է բուռն կերպով մղել Առաջնորդին եւ իր նոր օսկաններէն: Բայց ի՞նչ քանակաւ կարգ մը անտեղի վէճեր այս երկու նոր թերթերն ալ ընթերցանութեան յարմար նիւթեր կը պարուսակեն:

ԱՐԾԻԻ ի տարեկան բաժնեգրին է 6 ֆր. եւ հասցէն Խմբ. ԱՐԾԻԻ ի, բօթի տուփ 2191 ՊՕՄԴՈՆ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Մեզ հետ հայիւ ունեցողներէն կը խնդրենք որ ժամ առաջ կարդալուն հայիւնին: Հակառակ պարագային ուրիշ կերպով պիտի վարուինք անոնց հետ:

Ա. ԶԱՐԳԱՆԷԼԵԱՆ

ՎՈՒՆԱ (Գրականագետ)
(Պուրկարա)

որ Մանուկի եւ Նշանի նկատմամբ հանրային իրականաց գատին դադարման նկատմամբ տրուած որոշման դէմ առարկութեան տեղի չկայ:

Յիշեալ օգնականը կրկնեց պահանջադրին պարունակութիւնը եւ արձանագրել քարտուղարն ալ բոլոր պաշտօնաթուղթերը փողովին յանձնեց: Ասոր վրայ անյայտալ շարունակութեամբ խորհրդակցութիւնը, որ սա եղբակցութեան յանգեցաւ:

—1821 տարուոյ յուլիս 8 ի ուրբաթ օրը Սէլամյեղի արարողութիւնէ ետքը, Վեհ. Սուլթանին մզկիթէն դարձին կայս. գինուորներուն բարեւի կեցած ատեն, Մարգարանի հրապարակին վրայ եղեռնական պայթիւն մը յառաջ գալով 26 հոգիի մահուան եւ 58 հոգիի վիրաւորման պատճառ եղող նողկալի արարածներուն ամբաստանութիւնը հարցաքննութեան թուղթերուն եւ հարցաքննիչ գատարանի որոշմանը մէջ ընդարձակօրէն գրուած է: Յիշեալ եղեռնական արարքը Օսմ. կայս. կառավարութեան մայրաքաղաքին եւ Օսմ. երկրին ուրիշ կայսք մը կարեւոր տեղերուն մէջ մեծ են ընդհանուր խռովութիւն մը յարուցանելու անիծապարտ գիտաւորութեամբ Պուրկարի, Ժրնէվ եւ Թիֆլիս գտնուող Հայ եւ Պուրկար

խռվարական ընկերութիւններու կազմակերպած ու որոշած ծրագրին արդիւնքն է: Մտադրուած խռովութիւնը իր ձեւովը կայս. Գահուն հանդէպ իրենց հաստատ եւ կատարեալ հաւատարմութեամբ ծանօթ կայս. գինուորներուն եւ բոլոր հաւատարիմ հպատակներուն բնականաբար ազդելով եւ այդ անմիջական յուզման եւ ազդեցութեան հետեւանքով ընդհուպ տարածուելով, ալ անիծապարտ ոճրագործութեան իբր հեղինակ՝ օտարահպատակներուն դէմ ընդհ. յարձակում մը գործել տալու վատ գիտաւորութեամբ որակուած է: Այդ եպերի անձերը այսպէս նպատակ ունեցած են ցաւալի վրդովում եւ խռովակութիւն մը առաջ բերել ամէն կարգի հպատակներու եւ օտար երեւելիներու հանդէպ եւ տեղ տեղ շէնքեր կործանելով բնակարաններ քանդելով մեծ վնասներու պատճառ ըլլալով եւ իրենց այդ վայրագ ու խռովարարական մտադրութիւնները գործադրելու համար Պոլսոյ մէջ կազմակերպուած խռովարական մարմինոյ յիշեալ չարագործ անդամները աստիճանաբար գատ գատ դեր ունեցած են վատ ոճրագործութեան մէջ, ծառայած եւ օգնած են անոր իրաւոր զործման, հետեւաբար մեծ եղեռնին

մասնակցելու յանդգնած, եւ, ինչպէս արդէն կը տեսնուի հարցաքննութեանց թուղթերուն մէջ, յիշեալներէն իւրաքանչիւրին յայտարարութիւնը եւ խոստովանութիւնները դէպքերու ընթացքին կատարելապէս կը յարմարին. նոյնը կը հաստատեն նաեւ հաստատուն ապացոյցները եւ նշանները, պաշտօնական թուղթերը, լսուած օյլ եւ այլ վկայութիւնները: Յիշեալ խռովարարներուն հայթայթած եւ պատրաստած քանդիչ հրանիւթերը օտար շէնքերու մէջ զրտնուող երեւան հանուած եւ պայթման եղանակին վերաբերեալ գիտական տեղեկութիւններ պարունակող տեղեկագրիներ ձեռք ձգուած են:

Վերոյիշեալ պարագաները չարագործները ամբաստանելու բաւական ըլլալով. անոնցմէ Լիբարիբա՝ ուրիշ անուամբ Սաֆօ, Տիկին Ժօրիս Աննա Նէլլէս, Օր. Ռուպինա Ֆային, Տիկին Ալեքովա, կառապան Գրիգոր Վարշամ, Յովհաննէս օրդի կարպետ Աշոա, Խաչիկի օրդի Արտաշ Գաբունեան թորգոմ, Սիւր Եւպորիչի, իրական անուամբ Վանան, կառապան Մկրտիչ Զարիպեան, ձրավար Երուանդ Ֆանակիւնեան Էտուաթ Ժօրիս, զոնապան Յովհաննէս, օրճեփ Նշան

զոնապան Մանուկ, զոնապան Առաքել եւ Յովսէփ, քիւպի ծառաներէն Մանուկ, Ախլաթի Զօր, պատժական օրէնքին 55րդ յօդուածին եւ 58րդ յօդուածի յաւելումին Ա. հատուածին տրամադրութեանց համեմատ, իսկ հօշակար Արշակ, գպրոցական Յովակիմ, գպրոցական Գաբիւն, Երուանդ Արաճաճեան, Ամուճա Արաճաճեան, Թազուր Յակոբեան, զրաժախ Եղիս, Երուանդ Յովհաննէս, Պօղոս, միւս Մանուկը եւ Խաչիկի նոյն օրէնագրերին 63րդ յօդուածին Ա. հատուածին տրամադրութեան համեմատ, եւ Մաթիօ, Միխայիլ, Միթօ, եւ Մանուլ՝ նոյն օրէնագրերին 63րդ յօդուածին տրամադրութեան համեմատ, իբրեւ եղեռնական արարքի հեղինակ նկատուելով, եղեռնաղաւ ատենին առջեւ իբրեւ ոճրագործ գատապարտուելու համար, 1321 տարուոյ հոկտ. 18 թուականաւ միահողոյն որոշուեցաւ ներկայ ամբաստանեալները նոյն գատարանին վրայ փոխադրել եւ փախտականներու մասին ալ ձերբակալման հրամանագրի հանել: Այս որոշումները զրի առնուելով, թուղթերուն հետ մէկտեղ գեկուցուելով զրկուեցաւ:

24 հոկտ. 321 (Շարունակելի)

